

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՀԱՐՑՄՈՒՆՔ ՎՐԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Հարցմունք վրաց Եպիսկոպոսի ի Հայոց Վարդապետէ
Սարկաւագէն, գետ զոլով յազգս ամենայն:

Եթէ զիա՞րդ ունի երգք սաղմուխն առացեալ. Դու խորտակեցեր զզը-
ւուխ վիշտապաց ի վերա ջուրց: Դու փշրեցեր զզուուի վիշտապին և հոռոր զնա
կերակուր զաւրացն Հնդկաց:

Ի զիմաց գերելոյ ժողովրդեանն ի Բարելոն մասուցանէ զոդրերդական
սպազմանն Դաւիթ՝ Ասաֆաւ Հանգերձ եւ այլովք երգակցաւք: Բնդէ՞ր մեր-
ժեցեր, Աստուած, իսպառ. բարեկացաւ սրտմութեան քո ի մերա ժողովրդ-
եան քո: Եւ ի կարգ արկեալ մի բառ միոջէ դանցս դժնդակ կրիցն, որ ի Քաղ-
դէացւոցն, զաւերած քաղաքին Երուսաղէմի եւ զիսրայէլեան ազդին դերու-
թիւն, զիկիզումն տաճարին, եւ զի խորհեցան յուցուցանել զամենայն տաճու-
մասուծոյ: Եւ ապա ի վրէժինդրութիւն կոչելով զիկոսւած, առէ, Մինչեւ
յե՞ր Աստուած նախառէ թշնամին, բարկացուցանէ Հակառակորդն զանուն
սուրբ քո: Յուշ առնէ եւ զառաջին սքանչելեացն վասն ապասութեանն Խորայէ-
զի, թէ որպէս զիմարաւոն եւ զգաւրճ իւր սատակեաց ի խորս Կարմիր ծովան:
Վիշտապ անուանէ զնախարարու, իսկ վիշտապ զինքն իսկ գյուղամին: Այլ զի առէ ե-
թէ ետուր զնա ի կերակուր զաւրացն Հնդկաց: Այս Հնդիկի գրացիք Եպիսկոպոսի,
եկք են ի ըստն Հնդկաց, որ յարեւելո Հարաւոյ առ Հնդէս զետով առնէ: Եւ
այնքան զաւրացան ի պանդիստութեանն, որ եւ բազում անդամ տիրէին Եղիպ-
տացւոց եւ թագաւոր ի մերա նոցա յինքեանց կացուցանէին: Եւ յորժամ կոր-
եաւ փարաւոն իւրովքն առ Հասարակ, եւս առաւել քաջարերեցան առնուր յա-
ւարի զազդն Եղիպտացւոց եւ ծառայեցուցանել զնոսա: Վասն որոյ ի կերակուր
տալ, առէ, զիիշտապն փարաւոն զաւրացն Եթէուպացւոց, զողջոյն ժողովուրդ
Ժառանգութեան նորա յանուն նորա կոչելով: Քանզի յուտել ասի, յափշտա-
կելն եւ ծառայեցուցանել: Որպէս եւ առէ իսկ Աստուած բերանով սուրբ մար-
դարէին վասն իւրոյ ժառանգութեանն Խորայէզի կոչեցելոյ յինորեասանեայ-
ցրն վշտացելոց, որք առտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր, զայն ակնար-
կելով:

Այլ միւս եւս Հարցումն ձեր վասն զեղջկաց ազիստաց վիշտապին անուա-
նելոյ, ոչ ունին զժուուրինս եւ տարակուսելի ինչ, քանզի ոչ եթէ վիշտապ է փո-
չին մանուածոյ ի փոթորկէ զետանկանէ յուրդս խաղացելոյ, այլ Հողմ ինչ է
պատուելեալ պատեալ զմիմեամբք, լցեալ Հողմով յերկրէ, զի յորժամ զէմ ընդ
զէմ միմեանց փշեցեն եւ Հանդեռք զտանիցին, առ ի շգրկելոյ միոյն զժիւան
եւ ոչ յաղթահարելոյ, ըլջան իմն առնուն ի միասին զնալով պատմամբ զիրե-

բաւրք եւ քանդի ոչ զատանին, եւ ոչ խոսորին ի միմեանց, մինչեւ ի բարձրութիւն աւզոյա վերնոյ այնպէս երեւին; Եւ լինի այս երրեմն բուռն եւ սաստիկ զաւրութեամբ, իսկ երրեմն հանդարտապոյն եւ նուազ: Առաջարկեալիան սատութեանն անդն զնել եւ հաւաալ մի երրեք յանձն առնուցուո՞ միշտակ զնա անուանողաց: Քանդի յիմարտց են այդպիսի կարծիք, որպէս եւ որք վասն յասնոյ խաւարմանն աղձատին ի տանոյ միշտակ դատարկարանելոյ:

Այլ վասն որ ի Յոր միշտակին էիք հարցել բարում ունի տեսութիւն բանն, որ ոչ է այժմու ձեռնարկութեանն, սակայն փոքր ինչ եւ մանաւանդ զինդրելին ձեզ ծանուցուք համառաւստ բանիւ: Նա է սկիզբն արարածոց Տեսորն, ասաց որ խաւէրն ընդ Յոր յամոռոյ եւ ի մրրիէ, ոչ ամենայն արարածոց, ոյլ որ ի ջուրս բուժանին, քանդի Մուսիս զերկինն առաջի զրէ արարածոյ ամենայն ի սկիզբն, եւ է յազթ կենդանին մարմնոյ եւ անհնարին մեծութեամբ, թագաւոր որոց ի ջուրսն, բայ որում եւ զրեալն իսկ է, դոր եւ անուանեն Լեւիաթան ժողովք իմաստանց, քանդի որպէս ի Բեհմովիթ ցամաքին սողնաց կենդանեաց թագաւոր, եւ զազանաց՝ ասեւծ, այսպէս եւ ջրային արարածոց չնշաւորաց Լեւիաթան, մի է եւ տանց Ծորդի ընդերութեանն, ոչ ծնեալ յուժեքէ, վասն զի առաջին յարարածու Աստուծոյ զաւրական կենդանիս, եւ ոչ ծնեալ զոք յինքնէ, քանդի ոչ տուաւ նմա սկրիլ անմամբ ծնընդեան: Մահ է պատճու աճականաց ի ձեռն ծնընդեան, զի մի աօգականեացին սեռք եւ տեսուկք կենդանեաց, այլ փոխանորդութեամբ մնացէ ամենայն առանց եղծման եւ առականութեան ի պակասութենէ նմա, վասն զի ոչ մեռանիւ: ոչ հրամանցու ծնընդապործութեամբ յառաջխազացութեամբն, եւ ունի դործ զարդելումն չուրց ներքին անդընդոց, քան դյաստակս վերին ծովու, քանդի զահացին ծանրութիւն մեծութեան իւրոյ մարմնոյն յեցուցեալ ի վերա սաստկարիսոց հասանաց յորդութեան ջուրցն, այնքան միայն թոյլ տալոյ ջուրցն ելրոտեան, որքան հեշտ եւ զիւրին որովայնի մարմնոյն իւրոյ թուեսցի եւ իցէ: Եւ այս դործ մեծի նախախնամութեանն Աստուծոյ, զի մի ծովոսցի ծածկութեամբ ջուրց երկիրս ցամաք, որպէս ի սկզբանն, ոչ էթէ զի զանդքնդային բղիմունարն, որ ստեղծ զամենայն ոչընչէ, եւ զեղեցկասպէս նախախնամէ, ոչ կարէր այլադդ արդելու կամ խափանել, զի մի ընաւ իսկ լինիցի, այլ որպէսի զիւրոյ անշափական զաւրութեանն եւ զիմաստութեան հանդէս ցուցցէ, բայ որում ևուեն Յունան յանդունուն կառավարելով, եւ երկիցեն ի նմանէ ամենայն աղդք, այնպէս կամենցաւ մատակարարել, բոյց բազում ինչ ի բանից պատճութեանն զնմանէ այլարանաբար առեալ լինի ի վերա իմանալոյ միշտին կամակրիք, եւ այդ յազակս զորին բաւականացի:

Իսկ վասն շարժմանց, թէ աւստի՞ լինին, է պատճառ այսոցիք բանութիւն հողմոց անդընդայնոց, քանդի երակք ընդարձակք են զնացից հողմոյ յերկրի, որպէս եւ ջորց ընթանալոյ: Վասնդի բայ որում ի վերա ծովու հիմուն էարկ բարձրեալն երկրի եւ ի վերա զետոց պատրաստեաց դնա, այնպէս եւ ի վերա հողմոց զժանրութիւն սորա կացոյց ամենահնարապէս եւ կարողաբար: Իսկ յորժամ թիւրեսցին չունչք հողմոցն յընտանի եւ ի բնաւոր ճանապարհացն, բայ երեք պատահման յազիսն եւ ի փափարս ստորերկր[Ե]այս, հարկ լինի սասանել երկրի, մինչեւ ուզ[Ղ]եսցին զնացք չնշմանցն հողմոց: Այլ յերբեմն սաստկակոյն լինի շարժումն բայ բոնութեան հողմոցն եւ կործանա-

կան, իսկ երբեմն հանդարապոյն վասն կակդութեան չնշմանն յուղիղն ընթառարություն է բարեկարգապէս՝ ոչ ինչ վնասի երկրի, բայց խոտաքումն զնացիցն և առաւելութիւն բանութեան զզորդումն երկրի զործէ, է՛ երբեք զի թաւթափէ միայն, եւ է զի մորնչումն եւեթ զործէ, զոր մորնչովական կոչեն, և անաւ[ս]ըութեան պատահել երկրի՝ պատառէ, ջոր կամ հուր կամ վէժո ի մեր ձգեալ ընկենու, և այլ երրիք զուշիւն միայն լսեցուցանէ: Իսկ արարիչն ամենայնի, յորժամ կամիցի ներել մեզ բնաւորական խրայ(ք) քաղցրութեամբն, առն ձակոծեալ ընդրկէ զրոնութիւնն. և տեսեալ յանդարձութեան զազոս մարդկան և չշահեալ ինչ յերկայնամուռթենէն՝ ի տանիանու հարուածոց մեղ ներզործէ, որոյէս ևւ զայլս ի մերա երկրի պատուհանու: Եւ եթէ ընդէ՞ր բարիք ընդ շարս մեռանին, ևւ անմեղք բնզ մեզաւորս, ի բանէ անտի ուսցիս, զոր արարեալ է մեր բառ կարողութեան՝ յազազս մեծի ևւ սաստակական արեւմտեայ շարժմանն: Եւ զայլ բաւական համարեալ թողցուք զերկոյնմառութիւն բնախաւութեանն:

Ա. Յակոբեանց թ. 1272 ձեռագրին պարունակած այս զրուածքը (թղ. 376ա—380բ) հրատարակուած է 1951ին, Անդրիաս, Գեռազրաց Յիշատակարաններու առաջին հատորին մէջ (էջ 343—348), տասնեակ մը կարեւոր սիալներով եւ պակասներով:

Տարբեր ձեռագրի մը համաձայն հրատարակուած է դարձեալ, 1956-ին, Երեւան, Յոհաննէս Խմատասէրի մատենագրութեանց կարգին (էջ 302—304), նմանապէս բազում սխալներով եւ թերոյը ներով:

Նկատի առնելով վերայիշեալ հրատարակութեանց ոչ զոհացուցիչ հանգամանքը, կը խորիինք թէ այս հրատարակութիւնը աւելորդ պիտի չհամարուի:

Ա. Յ. ԱՐՃՈՒՆԻ